ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ Է ԱԿՈՒՄԲԻ ՆԻՍՏ

07.02.2014 11:47

Հարգելի գործընկերներ
ՀՀ Փաստաբանների պալատի ակումբը Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուչության հետ համատեղ 2014 թվականի փետրվարի 05-ին կազմակերպել էր քննարկում:
ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ
1. Հայցվորի կողմից հայցից հրաժարվելու դեպքում պետական տուրքի բռնագանձման մասին:
2. Վարչական իրավախախտումների դեպքում՝ անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին:
Քննարկումը կազմակերպվել է փաստաբաններ Անահիտ Բեգլարյանի և Կարինե Բաղդասարյանի կողմից:

Ակումբի մասնակիցները արձանագրեցին, որ նախ անհրաժեշտ է պարզել հայցից հրաժարումը արդյոք պատասխանողի կողմից պարտավորությունների կատարման հետևանք է թե՝ ոչ: Բացի այդ, քանի որ պետական տուրքը մուծվում է պետության կատարած ծառայության դիմաց, իսկ հայցից հրաժարվելու դեպքում ծառայությունը ամբողջությամբ չի մատուցվել, ուստի այս դեպքում չի կարող պետական տուրքի գումարը գանձվել ամբողջությամբ, այլ պետք է գանձվի կատարած փաստացի ծառայության դիմաց:
Ակումբի մասնակիցները գտան, որ անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություն,այն է՝ անհրաժեշտ է գործի նախապատրաստական փուլում վեճերի լուծման դեպքում պետական տուրքի չափը նվազեցնել և պետական տուրքի գումար գանձել կատարած փաստացի ծառայության դիմաց: Այդ փոփոխությամբ պետական տուրքի գանձման չափը համարժեք կլինի կատարված ծառայությանը, ինչպես նաև կնպաստի վեճերի արագ լուծմանը և կբեռնաթափի դատարանների աշխատանքը:
Փաստաբան Կարինե Բաղդասարյանը առաջարկել է անվճար իրավաբանական խորհրդատվություն տալ այնպիսի գործերով, երբ վարչական պատասխանատվության են ենթարկվում սկսած 5000 ՀՀ դրամից - 100 000ՀՀ դրամը ներառյալ:
Խնդիրն այն է, որ անձը իրավական օգնություն ստանալու համար պետք է մի քանի անգամ ավել վճարի, քան տուգանքն է, ուստի անձը չի դիմում իրավական պաշտպանության, այլ ուղղակի վճարում է տուգանքի գումարը:
Ակումբի մասնակիցները արձանագրեցին , որ այդ ոլորտում թույլ տրված իրավունքի խախտումները ուսումնասիրելով կարելի է լուրջ խախտումներ հայտնաբերել և այդ կերպ օգնել անձանց, բացի այդ

կոլեկտիվ հայցերի ներդնման ինստիտուտը հնարավորություն կտա անձանց միավորվելու և իրավական արդյունավետ պաշտպանություն իրականացնելու :
Առաջարկվել է ուսումնասիրել այդ ոլորտում թույլ տրված իրավունքի խախտումները:
Անհրաժեշտության դեպքում կազմել հայցադիմումների տիպային օրինակներ՝ մի քանի վարչական իրավա-խախտումների վերաբերյալ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })